Հայ Փոստ
Հայաստանի Փոստ

Ալ. Կոմ / 1134-24
03.04.2024թ

#ՀայՓոստիկամԵնՈւր

«ԱՓՐԻՔՈԹԵՔ» ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆ ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

ՀՎՀՀ 02815766

ՀԱՍՑԵ Ք. ԵՐԵՎԱՆ, ԱՐԱՄԻ ՓՈՂ. 72,

ՀԵՌԱԽՈՍ+37491007060

Էլ.հասցեն anna.gevorgyan@gotcha.cam

**ԾԱՆՈՒՑՈՒՄ**

**Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին**

Համաձայն 2024 թվականի մարտի 26-ին «Հայփոստ» ՓԲԸ-ի և «ԱՓՐԻՔՈԹԵՔ» ՓԲԸ-ի միջև կնքված «Հայփոստ» ՓԲԸ-ի կարիքների համար համակարգչային ծրագրի սպասարկման ծառայությունների կատարման թիվ «ՀՓ-ԷԱՃԾՁԲ-24/10-2» համակարգչային ծրագրային ապահովման գնման պայմանագրի՝ (այսուհետ՝ Պայմանագիր) «ԱՓՐԻՔՈԹԵՔ» ՓԲ ընկերությունը պարտավորվել է կատարել պայմանագրով նախատեսված ծառայությունները 2024 թվականի մարտի 26-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 25-ը :

«ԱՓՐԻՔՈԹԵՔ» ՓԲ ընկերությունը 2024 թվականի մարտի 28-ի թիվ N 1/03/ՀՓ գրությամբ (կցվում է) Պատվիրատուին հայտնել է այն մասին, որ հրաժարվում է կատարել 2024 թվականի մարտի 26-ին «Հայփոստ» ՓԲ ընկերության միջև կնքված թիվ «ՀՓ-ԷԱՃԾՁԲ-24/10-2» պայմանագրով սահմանված իր պարտավորությունները :

Հիմք ընդունելով 2024 թվականի մարտի 28-ին «ԱՓՐԻՔՈԹԵՔ» ՓԲ ընկերության կողմից ներկայացված թիվ N 1/03/ՀՓ գրությունը՝ «Հայփոստ» ՓԲ ընկերությունը միակողմանի ամբողջությամբ լուծում է 26.03.2024 թվականին կնքված թիվ «ՀՓ-ԷԱՃԾՁԲ-24/10-2» պայմանագիրը, ինչպես նաև ստորև ներկայացված իրավակարգավորումները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ Օրենսքիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Նույն օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը

թուլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված

Պայմանագրի 7.11 կետով սահմանված է, որ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը ընտրված մասնակցին ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը լիազորված մարմինը հրապարակում է տեղեկագրում:Ընդ որում, սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը:Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մամնին և մասնակցին: Եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և կամ որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմնին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում ենք, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի որակավորման ապահովման գումարը կազմում է 225.000 (երկու հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ՝ համաձայն Հրավերի 10.2 կետի, և Պայմանագրի ապահովման գումարը կազմում է 150.000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ համաձայն Հրավերի 10.3 կետի, որոնք անհրաժեշտ է փոխանցել «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից բացված **«1930003703150100»** հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում ենք , որ «ԱՓՐԻՔՈԹԵՔ» ՓԲ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ ) բանկային օրվա ընթացքում «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից բացված **«1930003703150100»** հաշվեհամարին վճարել որպես պայմանագրի

կատարման ապահովում՝ 150.000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, և որպես որակավորման ապահովում՝ 225.000 (երկու հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ:

Միաժամանակ տեղեկացնում ենք, եթե Ձեր կողմից վճարվի վերը նշված վճարումները, ապա Ձեր ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ծանուցում ենք, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից բացված հաշվեհամարին փոխանցելու համար: Վճարված կտրոնների բնօրինակները անհրաժեշտ է ներկայացնել «Հայփոստ» ՓԲԸ-ի գնումների կազմակերպչական վարչություն:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

«ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ

ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝ ԱՐԱՅԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

gotcha
emotion recognition technology

Ել. - N 1/03/24թ
«28» 03 2024թ.
ք. Երևան

ՀԱՅՓՈՍՏ ՓԲԸ ԳՈՐԾԱԴԻՐ
ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ԱՐԱՅԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգարժան պրն. Արայիկ Աբրահամյան,

Սույն գրությամբ ցանկանում եմ հայցել ձեր ներողամտությունը «ԱՓՐԻՔՈԹԵՔ» ՓԲԸ կողմից հրաժարվելու կատարել «ՀՓ-ԷԱՃԾՁԲ-24/10» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի հիման վրա կնքված Հայփոստ ՓԲԸ կարիքների համար համակարգչային ծրագրի սպասարկման ծառայության մատուցման պետական գնման ՀՓ-ԷԱՃԾՁԲ-24/10-2 պայմանագրով սահմանված ծառայությունները՝ 1 (մեկ) ՀՀ դրամ տարեկան սպասարկման գնով՝ անհնարինության պատճառով:

Ես, Աննա Գևորգյանս, ներկայացնում եմ «ԱՓՐԻՔՈԹԵՔ» ՓԲԸ Ընկերությունը, հանդիսանալով սույն ընկերության համահիմնադիր-տնօրենը, անձամբ եմ մասնակցել ՀԱՅՓՈՍՏ ՓԲԸ կողմից կազմակերպված վերոհիշյալ ծածկագրով մրցույթին: Հաշվի առնելով տենդերային մրցույթի և մասնավորապես՝ "eauction.armeps.am" համակարգով մասնակցության առաջին փորձը, թյուրիմացաբար կատարել եմ մի շարք բացթողումներ, հասցնելով մեր ընկերության կողմից առաջարկվող գնառաջարկը մինչև 1 (մեկ) ՀՀ դրամի:

Հասկանալի պատճառներով մեր ընկերությունը ի վիճակի չէ կատարել վերոնշյալ պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցումը 1 (մեկ) ՀՀ դրամով:

Ուստի, հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, խնդրում եմ լուծել վերոնշյալ պայմանագիրը և տալիս ենք մեր համաձայնությունը գանձելու հետևյալ գումարները՝ (1) որակավորման պահովման տուժանք՝ 225,000 (երկու հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ (2) պայմանագրի ապահովման տ ուժանք՝150,000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ Հավելվածներ 3.2 և 4.1-ում նշված «ԻնեկոԲանկ» ՓԲԸ մեր հաշվեհամարից:

Մեկ անգամ ևս ցանկանում եմ հայցել ձեր ներողամտությունը «ԱՓՐԻՔՈԹԵՔ» ՓԲԸ և անձամբ իմ կողմից՝ ստեղծված իրավիճակի և ձեզ պատճառված անհարմարությունների համար:

Հարգանքներով՝

Աննա Գևորգյան

Համահիմնադիր, Գործադիր տնօրեն